# 840

Խոսք՝ Էլմ. 89

1. Ես կնայիմ մեծ զարմանքով
Նազովրեցի Տէր Յիսուսին,
Ինչպէ՜ս սիրեց զիս մեղքերովս,
Զոհեց Իր կեանքը անգին:
Պարտէզին մէջ, երբ կ’աղօթէր,
«Ո՜վ Հայր, կամքդ ըլլայ» կ’ըսէր,
Իրեն համար արցունք չունէր,
Բայց ինձ համար Նա կզոհուէր:

Ի՜նչ հիանալի, ո՜հ, ի՜նչ զարմանալի
Այդ Քո սերն, իմ Տէ՜ր, պիտ երգեմ հավետ,
Ի՜նչ հիանալի, ո՜հ, ինչ զարմանալի
Սերը Փրկիչ Հիսուսի:

2. Հրեշտակներ Անոր գթացին,
Լուսոյ աշխարհէն գալով,
Վշտաց մէջ Զինք զօրացուցին,
Չի կ’ընկճվեր Ան մեծ ցաւով:
Օր մը բոլոր սուրբերուն հետ
Պիտի տեսնեմ Իր դէմքը հեզ,
Գործս լոկ պիտ ըլլայ յաւէտ
Երգել՝ ի՜նչ Սուրբ ես Դու, Տէ՜ր: